

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

Հաշվետվություն

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 2015-2016 ուս. տարվա

/գիտխորհրդի նիստ, 24 հոկտեմբերի 2016թ./

Սն՝ԻՅ՝

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանի հաշվետվությունը՝ ֆակուլտետի 2015-2016 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 60 անդամներից 48-ը: Նիստը նախագահող Ա. Առաքելյանը առաջարկեց դեկանի ելույթի համար հատկացնել 15 րոպե, իսկ մյուս ելույթների համար՝ 5-ական րոպե: Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց տվյալ ընթացակարգը:

Ս. Աբրահամյան՝ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոց.

/հաշվետվությունը կցված է/

Յու. Գաբրիելյան՝ Գերմանական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.

Նախ ուզում եմ հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում կատարված աշխատանքները գնահատել լավ: Դեկանի հաշվետվությունը հանգամանալից է, ներկայացնում է կատարված աշխատանքների իրական պատկերը: Ֆակուլտետի մթնոլորտը աշխատանքային է, բարյացկամ է, միջամբիոնային հարաբերությունները՝ նորմալ, ցանկացած հարց լուծվում է կոլեգիալ ձևով: Այստեղ դեկանի լուսման մեծ է: Խնդիր եմ համարում այն փաստը, որ առարկայական ծրագրերն անընդհատ փոփոխվում են: Լուրջ խնդիր եմ համարում նաև ուսանողների և պրոֆեսորադասաձուսական կազմի հոսունությունը: Արտասահման ուսման ուղարկված 4 ուսանողներից 3-ը չեն վերադարձել: Խմբերի մեծությունը՝ 20-30 հոգի, չի նպաստում որակի ապահովմանը: Մշտապես ստանում ենք ոչ միայն դեկանի, այլև ռեկտորի աջակցությունը, որի համար ուզում եմ շնորհակալություն հայտնել:

Մ. Ապրեսյան՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆ.

Միանալով իմ կոլեգաներին՝ նշեմ, որ բարձր եմ գնահատում դեկանի կատարած աշխատանքը: Ֆակուլտետում ամեն ինչ նորմալ է դեկանի համեստ, քաղաքակիրթ վարքագծի շնորհիվ: Շնորհակալություն եմ հայտնում ռեկտորին և մեր դեկանին: Շնորհակալություն ռեկտորին միջազգային թեստավորման գործում մեզ աջակցելու համար:

Կ. Կարապետյան՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոց.

Ֆակուլտետում կատարվող ածխատանքներն իրոք լավ են ընթանում: Ուզում եմ հատկապես ուշադրություն հրավիրել ուսանողների կեցվածքի, դասախոսների կեցվածքի, ուսանող-դասախոս հարաբերությունների վրա: Ուսանողների քանակը խմբերում մեծ է, հնարավոր չէ այդպիսի քանակի դեպքում որակյալ թարգմանիչներ պատրաստել:

Հ. Բաղդասարյան՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոց.

Սկսեմ խնդիրներից: Ցավալի է, որ չունենք պորտուգալերենի դասախոս, հետևաբար առաջընթաց այդ լեզվի ուսուցման գործում չկա: Չունենք նաև իսպաներենի լեզվակիր մասնագետ: Փորձում ենք համագործակցության նոր եզրեր գտնել: Ներկայացրել ենք միջմշակութային հաղորդակցությանն առնչվող մագիստրոսական նոր ծրագրի հայտ: Իսպաներենի խմբերում ուսանողների քանակը բավականաչափ նվազել է այս ուսումնական տարում:

Ե. Երզնկյան` Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ.

Ֆակուլտետում կատարված աշխատանքներին տրված գնահատականի հետ համամիտ եմ: Հաշվի առնելով ընդհանրապես լեզուների ուսուցման առանձնահատկությունները` ուզում եմ խնդրել ռեկտորին, որ մյուս ֆակուլտետներում օտար լեզվին հատկացվող ժամերի քանակը ավելացվի:

Շ. Պարոնյան` Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ.

Ֆակուլտետում կատարված աշխատանքներն ուզում եմ գնահատել լավ: Տիրում է առողջ մթնոլորտ, իսկական *փիլիսոփայի դրախտ*: Այնուամենայնիվ կուզենայի, որ ավելի մեծ ուշադրություն դարձնենք լեզվի դասավանդման նոր մշակույթի ներդրմանը ֆակուլտետում, քանի որ մտնում ենք եվրոպական դաշտ: Առաջարկում եմ ներմուծել համակարգչային *Էդմոնդո* ծրագիրը: Պետք է նաև առավել ընդլայնել արտալսարանային աշխատանքների ոլորտը: Դիմել ենք դրամաշնորհային ծրագրի, սակայն ձախողվել ենք, կարծում եմ նորից կդիմենք:

Զ. Հարությունյան` Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոց.

Ֆակուլտետում կատարված աշխատանքները գնահատում եմ լավ: Կարևոր եմ համարում մրցակցության հարցը: Մեր ծրագրերը պետք է համապատասխանացվեն միջազգային շուկայի պահանջներին: Չունենք համակարգված մոտեցում այն հարցին, թե ի՞նչ ենք դասավանդում բակալավրիատում և մագիստրատուրայում:

Վեներա Ստեփանյան` ձԾԳԸ ԿՅԵՅ.ՅՆ, 4-ճ¹ ԴձճԵ, անգլ.

ՈւԳԸ-ն հաշվետու ժամանակաշրջանում շատ ակտիվ է եղել: Ներկայացրել ենք բազմաթիվ ելույթներ գիտաժողովներում, կազմակերպել ենք 20-ից ավելի միջոցառումներ: Հրատարակել ենք հոդվածների էլեկտրոնային ժողովածու: Շնորհակալություն եմ ուզում հայտնել ռեկտորին առաջարկությունների և մշտապես մեզ աջակցելու համար:

Ա. Միմոնյան` ԵՊՀ ռեկտոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Կուզենայի նախ անդրադառնալ այն հանգամանքին, որ քիչ ուշադրություն դարձվի համալսարանական ասեկոսներին` աշխատանքներին ավելի արդյունավետ ներգրավվելու համար: Կուզենայի նաև, որ դեկանները հիմնական ուշադրությունը դարձնեն ռազմավարական տեսլականներին, որոնք, կարծում եմ առավել կարևորվեցին Շ. Պարոնյանի և Զ. Հարությունյանի ելույթներում: Պետք է բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերը ավելի ճկուն դարձնել, աստիճանաբար անցնել 4+1, 4+2 և 3+2 ծրագրային փաթեթներին, մագիստրոսական ծրագրերը հարմարեցնել մասնագիտական և ակադեմիական հետապնդվող նպատակներին: Արդեն ունենք 19 հոգու համար նախատեսված հյուրատուն, ընթացքի մեջ է սպորտ համալիրի կառուցումը: Միջազգային համագործակցության

ուրրտում, ինչպես միշտ, աշխատանքները շատ ակտիվ են: Ուզում եմ նշել երեք տեսլական, որոնք շատ կարևոր են համարում: Առաջին՝ հնարավորինս ակտիվ մասնակցություն գրանտային ծրագրերին: Երկրորդ՝ ցանկացած գործունեություն ծավալելիս ռազմավարական ծրագրերը ընտրել որպես հիմք: Երրորդ՝ քանի որ դիմորդների քանակի կտրուկ նվազում է նկատվում՝ առավել մեծ ուշադրություն դարձնել քարոզչական գործունեությանը: Անհրաժեշտություն է համարում ծրագրերի արդիականացմանն ու դրանք ավելի գրավիչ դարձնելուն, քանի որ կարծես սկսել ենք ետ մնալ մրցակիցներից: Շատ ուրախ եմ ձեր ֆակուլտետում տիրող առողջ մթնոլորտի համար, որն էլ հնարավորություն կտա առավել արդյունավետ ներգրավվել ծրագրերի արդիականացման գործում: Ցավոք աշխատավարձի բարձրացում չի սպասվում, բայց հունվարից սկսում ենք ապահովագրական համակարգի ներմուծումը: Նշեմ մի քանի ընդհանուր և միայն ձեր ֆակուլտետին վերաբերող թերություններ.

- Ցածր է լեզվի տիրապետման մակարդակն ընդհանրապես համալսարանում :
- Քիչ են վճարովի ծառայությունները:
- Դասավանդման մեթոդները պետք է ավելի արդիականացնել:
- Քիչ են դրսից հրավիրված մասնագետները, որոնց համալսարանը կարող է ապահովել աշխատավարձով ու հյուրանոցով:
- Կարելի է ներմուծել չինարենի ուսուցման ծրագիր:
- Լավ չեն հետազոտվում ժամանակակից շուկայի պահանջները:
- Պասսիվ եք համալսարանական միջոցառումներին:

24 հոկտեմբերի 2016թ.